ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերի կիրառման վերաբերյալ

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն համայնքային ծառայողի համար երաշխավորվում են՝ վարձատրություն, <u>իր զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի համար հավելավճար</u> և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ վճարներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հավելավճարը՝ պաշտոնային դրույքաչափի նկատմամբ տոկոսային ավելացումը, սահմանվում է համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար: Համայնքի ավագանու որոշմամբ հավելավճար կարող է սահմանվել նաև համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժի համար:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն հավելավճարի կիրառման կարգը և չափը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին:

Օրենքների վերը նշված հոդվածների պահանջների կատարումն ապահովելու նպատակով, կարծում ենք, որ համայնքների համար ընդունելի կլինի հավելավճարների կիրառման համեմատաբար պարզ հետևյալ կարգը.

1. Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունեցող համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառել մեկ ընդհանուր հավելավճար՝ անկախ այն բանից, թե կոնկրետ համայնքային ծառայողի դասային աստիճանը քանի աստիճանով է բարձր իր զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից, ընդ որում՝ հավելավճարի չափը պետք է որոշի յուրաքանչյուր համայնքի ավագանին՝ ելնելով այդ համայնքի բյուջեի հնարավորություններից, օրինակ՝ ***մինչև 5*** տոկոսի սահմաններում:

Համեմատականի համար նշենք, որ «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու դեպքում քաղաքացիական ծառայողին տրվում է հավելավճար՝ նրա հիմնական աշխատավարձի (մեր օրինակում՝ «պաշտոնային դրույքաչափի») 5 տոկոսի չափով:

2. Համայնքի ավագանու որոշմամբ կարող է սահմանվել նաև համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժի համար հավելավճար:

Օրենքի համապատասխան դրույթը ենթադրում է, որ երկար տարիների աշխատանքային ստաժը վերաբերում է համայնքային ծառայության բնագավառին, այսինքն՝ համայնքային ծառայության պաշտոններում աշխատած ժամանակահատվածին:

Այս առումով հարկ է նշել, որ օրենքի հիշյալ դրույթը չի կրում պարտադիր բնույթ, հետևաբար, կոնկրետ համայնքի ավագանու իրավասությունն է երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժի համար հավելավճար սահմանել թե ոչ: Այդպիսի հավելավճար սահմանելու համար անհրաժեշտ է առաջին հերթին հաշվի առնել համայնքի բյուջեի կայուն հնարավորությունները:

Այնուհանդերձ, երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճար նախատեսելու դեպքում անհրաժեշտ է սահմանել ինչպես հավելավճարի մեծությունը, այնպես էլ նվազագույն այն ստաժը, որից պետք է հաշվարկվի հավելավճարը, օրինակ՝ երկար տարիների ստաժը կարող է սահմանվել հինգ կամ ավելի բարձր (վեց, յոթ,….տասը և այլն) տարիների ստաժից սկսած՝ ըստ համայնքի ավագանու որոշման:

Մեր կարծիքով՝ տվյալ դեպքում հնարավոր է կիրառել համեմատաբար պարզ հետևյալ տարբերակը՝

Աշխատակազմում համայնքային ծառայողի աշխատանքային ստաժը՝	Մինչև 5 տարի	5 տարի	6 տարի	7 տարի	8 տարի	9 տարի	10 տարի	10 տարուց ավելի
Պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի չափը (պաշտոնային դրույքաչափի նկատմամբ %-ով)՝	0	5	5	5	10	10	10	15

Հավելավճարի համակարգի ներդրման արդյունքում համայնքի բյուջեի ծախսերի ավելացումը կանխելու նպատակով առաջարկվում է հավելավճարի համակարգի ներդրման գործընթացն ուղեկցել քաղաքապետարանների (գյուղապետարանների) աշխատակազմերի օպտիմալացմամբ՝ բացառելով համայնքի բյուջեով պլանավորված աշխատավարձի ֆոնդի ցանկացած ավելացումը: